ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՒ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԲԱՆԿԻ ՄԻՋԵՎ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ԷՆԵՐԳԵՏԻԿ ԱՆՑՈՒՄՆ ԱՊԱՀՈՎՈՂ ԾՐԱԳԻՐ» ՎԱՐԿԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ

Քաղ. Երևան 19 նոյեմբերի 2024 թ.

Սահմանադրական դատարանը՝ կազմով. Ա. Դիլանյանի (նախագահող), Վ. Գրիգորյանի, Հ. Թովմասյանի, Դ. Խաչատուրյանի, Ե. Խունդկարյանի, Հ. Հովակիմյանի, Է. Շաթիրյանի, Ս. Սաֆարյանի, Ա. Վաղարշյանի,

մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝

Կառավարության ներկայացուցիչ՝ Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի տեղակալ Հ. Հարությունյանի,

համաձայն Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետի, 169-րդ հոդվածի 3-րդ մասի, ինչպես նաև «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի, 40 և 74-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «Հայաստանի Հանրապետության ու Վերակառուցման և զարգացման միջազգային բանկի միջև «Հայաստանի էներգետիկ անցումն ապահովող ծրագիր» վարկային համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Կառավարությունն իր՝ 2024 թվականի սեպտեմբերի 12–ի N 1461-Ա որոշմամբ հավանություն է տվել «Հայաստանի Հանրապետության ու Վերակառուցման և զարգացման միջազգային բանկի միջև «Հայաստանի էներգետիկ անցումն ապահովող ծրագիր» վարկային համաձայնագիրը վավերացնելու մասին» օրենքի նախագծի վերաբերյալ Կառավարության օրենսդրական նախաձեռնությանը և որոշել է այդ համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանությունը որոշելու նպատակով դիմել Սահմանադրական դատարան:

Գործի քննության առիթը Կառավարության՝ 2024 թվականի սեպտեմբերի 13-ին Սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով սույն գործով վերոնշյալ համաձայնագիրը, հետազոտելով Կառավարության ներկայացուցչի գրավոր բացատրությունը և գործում առկա մյուս փաստաթղթերը՝ Սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց .**

1. «Հայաստանի էներգետիկ անցումն ապահովող ծրագիր» վարկային համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) ստորագրվել է 2024 թվականի օգոստոսի 6-ին և օգոստոսի 8-ին՝ Համաձայնագրի 1-ին հավելվածում սահմանված Ծրագրին աջակցելու համար ֆինանսավորում տրամադրելու նպատակով:

2. Համաձայնագրով Վերակառուցման և զարգացման միջազգային բանկը (այսուհետ՝ Բանկ) համաձայնում է Համաձայնագրի 1-ին հավելվածում նկարագրված ծրագրի (Ծրագիր) ֆինանսավորմանն աջակցելու համար Հայաստանի Հանրապետությանը տրամադրել 40.000.000 ԱՄՆ դոլար գումար, որը կարող է ժամանակ առ ժամանակ փոխարկվել Արժույթի փոխարկման միջոցով: Ծրագրի փակման ամսաթիվն է 2029 թվականի հունիսի 30-ը:

Ծրագրի նպատակներն են՝ ապահովել ավելացված վերականգնվող էներգետիկ կարողությունների ինտեգրումն էլեկտրահաղորդման ցանցում և ընդլայնել էլեկտրահաղորդման ընկերության առևտրային կենսունակությունը:

Ծրագիրը ԲԾՄ ծրագրի[1] փուլ է և կազմված է երկու ոլորտներից. Արդյունքային ոլորտ 1. «Էլեկտրահաղորդման ցանցում ավելացված վերականգնվող էներգետիկ կարողությունների ինտեգրման ապահովում» և Արդյունքային ոլորտ 2. «Էլեկտրահաղորդման ընկերության առևտրային կենսունակության ընդլայնում»: Վերջիններս էլ ներառում են մի շարք միջոցառումներ՝ ինչպես նշված է Համաձայնագրի 1-ին հավելվածում:

Համաձայնագիրն ունի անբաժանելի մաս կազմող երեք հավելված և մեկ առդիր՝ Հավելված 1. «Ծրագրի նկարագրությունը», Հավելված 2. «Ծրագրի կատարումը», Հավելված 3. «Հանձնառությամբ պայմանավորված աստիճանական մարման ժամանակացույց» և Առդիր. «Սահմանումներ»:

3. Համաձայնագրով Հայաստանի Հանրապետությունը ստանձնում է մի շարք պարտավորություններ, մասնավորապես՝

3.1. վճարել Միանվագ կոմիսիոն վճար՝ Վարկի գումարի մեկ քառորդ տոկոսին (0.25%) հավասար չափով (Հոդված II, բաժին 2.03),

3.2. վճարել Պարտավորավճար՝ տարեկան Վարկի չառհանված մնացորդի մեկ քառորդ տոկոսին (0.25%) հավասար չափով (Հոդված II, բաժին 2.04),

3.3. վճարել տոկոսադրույք, որն Ելակետային տոկոսադրույքն է՝ գումարած Լողացող սպրեդը կամ այնպիսի տոկոսադրույքը, որը կարող է կիրառվել Փոխարկումից հետո՝ համաձայն Ընդհանուր պայմանների 3.02 «ե» բաժնի (Հոդված II, բաժին 2.05),

3.4. սկսած 2039 թվականի հուլիսի 15-ից մինչև 2049 թվականի հունվարի 15-ը՝ կիսամյակային կտրվածքով՝ յուրաքանչյուր տարվա հունվարի 15-ին և հուլիսի 15-ին վերադարձնել Վարկի մայր գումարը 5% մասնաբաժնով (Հոդված II, բաժիններ 2.06, 2.07 և Հավելված 3),

---

[1] «ԲԾՄ ծրագիր» նշանակում է Բազմափուլ ծրագրային մոտեցման ծրագիր, որը մշակվել է ավելացնելու համար վերականգնվող էներգետիկ կարողությունները Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի տարածաշրջանի մասնակից երկրներում:

3.5. հայտարարել Ծրագրի նպատակների և Բազմափուլ ծրագրային մոտեցման (այսուհետ՝ ԲԾՄ) ծրագրի մասով Հայաստանի Հանրապետության պարտավորությունը և այդ նպատակով ապահովել, որ Ծրագիրն իրականացվի Ծրագիրն իրականացնող մարմնի կողմից՝ Ընդհանուր պայմանների V հոդվածի, Համաձայնագրի 2-րդ հավելվածի և Ծրագրային համաձայնագրի համաձայն (Հոդված III, բաժին 3.01),

3.6. Ծրագրի իրականացման ընթացքում մշտապես ապահովել, որ Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունը (այսուհետ՝ ՏԿԵՆ) պատասխանատու լինի Ծրագրի ընդհանուր համակարգման համար և Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի (այսուհետ՝ ՀԾԿՀ) հետ միասին պատասխանատու լինի համապատասխան քաղաքականության վերաբերյալ և կարգավորող որոշումների համար (Հավելված 2, բաժին I, կետ «Ա», ենթակետ 1),

3.7. Ծրագրի իրականացման ընթացքում մշտապես ունենալ Բանկի համար բավարար մանդատով, կազմով և ռեսուրսներով Տեխնիկական աշխատանքային խումբ, որը կնախագահի ՏԿԵՆ-ը, կազմված կլինի համապատասխան բոլոր մարմիններից, պատասխանատու կլինի Ծրագրի համակարգման և Ծրագրի իրականացումը դյուրացնելու համար (Հավելված 2, բաժին I, կետ «Ա», ենթակետ 2),

3.8. Ծրագրի իրականացումը դյուրացնելու համար Վարկի միջոցները հասանելի դարձնել Ծրագիրն իրականացնող մարմնի համար Հայաստանի Հանրապետության և Ծրագիրն իրականացնող մարմնի միջև օժանդակ համաձայնագրի շրջանակներում՝ Բանկի կողմից հաստատված պայմաններով (Օժանդակ համաձայնագիր) (Հավելված 2, բաժին I, կետ «Բ», ենթակետ 1),

3.9. Օժանդակ համաձայնագրով սահմանված Հայաստանի Հանրապետության իրավունքներն իրացնել այնպես, որ պաշտպանվի Հայաստանի Հանրապետության և Բանկի շահերը և հասնի Վարկի նպատակներին, իսկ եթե Բանկն այլ բան չի համաձայնում, չզիջել, չփոփոխել, չչեղարկել Օժանդակ համաձայնագիրը

կամ դրա դրույթներից որևիցե մեկը կամ չհրաժարվել դրանցից (Հավելված 2, բաժին I, կետ «Բ», ենթակետ 2),

3.10. ապահովել, որ Ծրագրի գործողությունների ծրագիրը, որը համաձայնեցվել է Բանկի հետ, իրականացվի նշված Ծրագրի գործողությունների ծրագրում սահմանված ժամանակացույցին համապատասխան, Բանկի համար բավարար ձևով, և վարել քաղաքականություններ և ընթացակարգեր, որոնք պատշաճ են նշված Ծրագրի գործողությունների ծրագիրը Բանկի համար բավարար եղանակով և բովանդակությամբ դիտանցելու և գնահատելու հնարավորություն տալու համար (Հավելված 2, բաժին I, կետ «Գ», ենթակետ 1),

3.11. առանց Բանկի նախնական գրավոր համաձայնության՝ էականորեն և (կամ) զգալիորեն չփոփոխել, չվերանայել Ծրագրի գործողությունների ծրագրի որևէ դրույթ, չհրաժարվել դրանից, չչեղարկել կամ չկասեցնել այն (Հավելված 2, բաժին I, կետ «Գ», ենթակետ 2),

3.12. ապահովել, որ Ծրագիրը բացառի ցանկացած գործողություն, որը, Բանկի կարծիքով, հավանական է, որ շրջակա միջավայրի և (կամ) ազդակիր անձանց վրա զգալի բացասական ազդեցություններ կունենա, որոնք զգայուն, տարաբնույթ կամ աննախադեպ են, կամ ներառում է աշխատանքների գնումներ, որոնց գնահատված արժեքը կազմում է հարյուր տասնհինգ միլիոն դոլարին ($115,000,000) համարժեք կամ ավելի գումար մեկ պայմանագրի համար, ներառում է ապրանքների գնումներ, որոնց գնահատված արժեքը կազմում է յոթանասունհինգ միլիոն դոլարին ($75,000,000) համարժեք կամ ավելի գումար մեկ պայմանագրի համար, ներառում է ոչ խորհրդատվական ծառայությունների գնումներ, որոնց գնահատված արժեքը կազմում է յոթանասունհինգ միլիոն դոլարին ($75,000,000) համարժեք կամ ավելի գումար մեկ պայմանագրի համար, կամ ներառում է խորհրդատվական ծառայությունների գնումներ, որոնց գնահատված արժեքը կազմում է երեսուն միլիոն դոլարին ($30,000,000) համարժեք կամ ավելի գումար մեկ պայմանագրի համար (Հավելված 2, բաժին II),

3.13. Ծրագրի յուրաքանչյուր հաշվետվություն Բանկին ներկայացնել ոչ ուշ, քան յուրաքանչյուր օրացուցային կիսամյակի ավարտից մեկ (1) ամիս հետո՝ ներառելով օրացուցային կիսամյակը (Հավելված 2, բաժին III),

3.14. չնայած Համաձայնագրի 2-րդ հավելվածի IV բաժնի «Ա» մասի դրույթներին՝ որևէ առհանում չկատարել ստորագրման ամսաթվից առաջ ապահովված հատկացումների հետ կապված արդյունքների (այսուհետ՝ ՀԿԱ) հիման վրա՝ բացառությամբ նրա, որ մինչև $5,321,000-ը չգերազանցող հանրագումարի չափով առհանումները կարող են կատարվել ՀԿԱ #1-ի և ՀԿԱ #2-ի հիման վրա, որոնք իրագործվել են նախքան այդ ամսաթիվը, սակայն 2023 թ. փետրվարի 3-ի օրը կամ դրանից հետո, ինչպես նաև Համաձայնագրի 2-րդ հավելվածի IV բաժնի «Ա» մասի 2-րդ կետի աղյուսակում նշված 1-7-րդ կատեգորիաների շրջանակներում որևէ ՀԿԱ-ի համար, մինչև և եթե Հայաստանի Հանրապետությունը Բանկի համար բավարար փաստարկներ չի ներկայացնում առ այն, որ ՀԿԱ-ն իրագործվել է (Հավելված 2, բաժին IV, մաս «Բ», կետ 1):

4. Համաձայնագրի 2-րդ հավելվածի IV բաժնի «Ա» մասի 2-րդ կետի աղյուսակում սահմանվում է Վարկի միջոցների առհանման յուրաքանչյուր կատեգորիա (այդ թվում՝ Հատկացման հետ կապված ցուցանիշները՝ ըստ կիրառելիության) (Կատեգորիա), Կատեգորիաներից յուրաքանչյուրի համար՝ Հատկացումների հետ կապված արդյունքները (ըստ կիրառելիության) և Կատեգորիաներից յուրաքանչյուրի համար՝ Վարկի գումարների հատկացումը:

Համաձայնագրի I հոդվածի 1.01 բաժնի համաձայն՝ «Վերակառուցման և զարգացման միջազգային բանկի Ընդհանուր պայմանները՝ ՎԶՄԲ ֆինանսավորման համար, արդյունքահեն ծրագրի ֆինանսավորում»՝ թվագրված 2018 թվականի դեկտեմբերի 14-ով (վերջին անգամ վերանայված 2023 թվականի հուլիսի 15-ին)՝ ինչպես սահմանված են Համաձայնագրի առդիրում, կիրառվում են Համաձայնագրի նկատմամբ և կազմում են դրա մաս:

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետով, 170-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 63, 64 և 74-րդ հոդվածներով՝ Սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց** .

1. Հայաստանի Հանրապետության ու Վերակառուցման և զարգացման միջազգային բանկի միջև «Հայաստանի էներգետիկ անցումն ապահովող ծրագիր» վարկային համաձայնագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Սահմանադրությանը:

2. Սահմանադրության 170-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ **Ա. ԴԻԼԱՆՅԱՆ**

19 նոյեմբերի 2024 թվականի
ՍԴՈ-1759